





ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2018-2019 թթ. պետական բյուջեների եկամուտների վերաբերյալ (հունվար-փետրվար)


«Վ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտներ (մլրդ դրամ)




ՀՀ 2018-2019 թթ. պետական բյուջեների եկամուտները (մլրդ դրամ)



2019թ. (փետրվար փաստացի, մլրդ դրամ) / 2018թ. (փետրվար փաստացի, մլրդ դրամ)



2019թ. (փետրվար փաստացի, մլրդ դրամ) / 2018թ. (փետրվար փաստացի, մլրդ դրամ)



«Վ 2019 թ. պետական բյուջեի հունվար-փետրվար ամիսների եկամուտները կազմել են 203.4 մլրդ դրամ, որը կազմում է 2019թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 66 %-ը: 2019թ. հունվար-փետրվարի եկամուտները 49.8 մլրդ դրամով, կամ 32.4 %-ով ավել են քան 2018թ. հունվար-փետրվարի եկամուտները:

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 188.4 մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 66.1%-ն է: 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ հարկային եկամուտները և պետական տուրքերը ավել են 44 մլրդ դրամով, կամ 30.5 %-ով:

Պաշտոնական դրամաշնորհները 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 5.1 մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 50.5%-ն է: 2019թ. հունվար-փետրվարի պաշտոնական դրամաշնորհները 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ ավել են 4.5 մլրդ դրամով, կամ 850%-ով:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 9.9 մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 77.3%-ն է: Այլ եկամուտները 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ ավել են 1.3 մլրդ դրամով կամ 15.1%-ով:

Բյուջեի եկամուտները ավելացված արժեքի հարկի գծով 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 77.5 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ ավել է 3.1 մլրդ դրամով, կամ 4.2 %-ով:

Ալցիդային հարկի գծով եկամուտները 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 15.6 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ պակաս է 5.5 մլրդ դրամով կամ 26.1%-ով: Ընդ որում, հանրապետություն ներմուծվող ենթակալցիդային ապրանքների հարկումից եկամուտները կազմել են 4 մլրդ դրամ, կամ 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ 0.6 մլրդ դրամով կամ 17.6 տոկոսային կետով ավելի, իսկ հանրապետություն արտադրվող ենթակալցիդային ապրանքների հարկումից 2019թ. հունվար-փետրվարին ստացվել է 11.6 մլրդ դրամ, ինչը 2018թ. համեմատությամբ նվազել է 6 մլրդ դրամով կամ 34.1 տոկոսային կետով:

2019 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում շահութահարկի և բնակարանային հարկի գծով եկամուտները կազմել են 65.1 մլրդ դրամ, որը 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ ավել է 7.8 մլրդ դրամով կամ 13.6 տոկոսային կետով:

Մաքսատուրքերի գծով եկամուտները 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 11.9 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ ավել է 0.5 մլրդ դրամով կամ 4.4 տոկոսային կետով:

Շրջանառության հարկի գծով 2019թ. հունվար-փետրվարին արձանագրվել է 7.2 մլրդ դրամի եկամուտ 2018թ. հունվար-փետրվարի 5.2 մլրդ դրամի դիմաց:

Սոցիալական վճարների գծով եկամուտները 2019թ. հունվար-փետրվարին կազմել են 3.2 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-փետրվարին ևս կազմել է 3.2 մլրդ դրամ:

2019թ. հունվար-փետրվարին պետական տուրքերի գծով եկամուտները կազմել են 4.4 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ ավել է 0.5 մլրդ դրամով, կամ 12.8 տոկոսային կետով:

Այլ հարկային եկամուտների գծով 2019թ. հունվար-փետրվարին արձանագրվել է 9.9 մլրդ դրամ, ինչը 2018թ. համեմատությամբ ավելի է 1.3 մլրդ դրամով կամ 15.1 տոկոսային կետով:

2019թ. հունվար-փետրվարին արտաբյուջետային եկամուտները կազմել են 4.3 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-փետրվարի համեմատությամբ պակաս է 0.4 մլրդ դրամով, կամ 8.5 տոկոսային կետով:

2019 թվականի հունվար-փետրվարին տնտեսավարողների հարկային հաշվետվություններով չհիմնավորված կանխավճարների (գերավճարների) վերադարձի ու դրանց հաշվին հարկային պարտավորությունների հետ հաշվանցման գումարները կազմել են 58.4 մլրդ դրամ 2018 թ. հունվար-փետրվարի 53.8 մլրդ դրամի դիմաց: